ՎԴ/11484/05/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 նոյեմբերի 2024 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/11484/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Կոտայքի մարզի դատախազությունը 2024 թվականի սեպտեմբերի 18-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Աբովյան համայնքի ավագանու՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, որպես առ ոչինչ ճանաչված վարչական ակտի հետևանքի ածանցյալ պահանջներ՝ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 92ա որոշումը, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի աճուրդը, Գագիկ Հովսեփյանի և Վերին

Պտղնի համայնքի ղեկավարի միջև 2003 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 96 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2004 թվականի հունվարի 13-ին կնքված հողային տարածքի վարձակալության պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 3-ի թիվ 13 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված Համաձայնագիրը, Գագիկ Հովսեփյանի և Հերմինե Նվերի Պողոսյանի միջև 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված մանկապարտեզի շենքի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 9-ի թիվ 3 որոշումը, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 բնակելի տունը 220,9քմ մակերեսով և 0,03882հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ 2011 թվականի փետրվարի 14-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը՝ Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 հասցեի 220,9քմ մակերեսով հասարակական մանկապարտեզի և 4,0քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Գագիկ Հովսեփյանի անվամբ 2004 թվականի հունվարի 27-ին և 2010 թվականի մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 220,9քմ մակերեսով մանկապարտեզի շենքի և մանկապարտեզի կառուցապատման 0,03882հա մակերեսով հողամասի նկատմամբ 2010 թվականի ապրիլի 27-ին Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 464-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԿԴ3/0174/02/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմերից մեկը՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, Վերին Պտղնի համայնքի ավագանին է, սակայն խնդրո առարկա գույքի աճուրդի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Վերին Պտղնի համայնքի ավագանու՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը):*

Հետևաբար տվյալ դեպքում հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի դրության համաձայն՝ հայցադիմումը ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում:

(…)

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ Վերին Պտղնի համայնքի ավագանու և աճուրդի հաղթողի (ենթադրաբար Գագիկ Հովսեփյանի) միջև ծագած իրավահարաբերության՝ հանրային բնույթ չունենալու պայմաններում հայցադիմումի հիմնական պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, ուստի հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, (...) առաջին ատյանի դատարան: Իսկ սույն հայցադիմումով պատասխանողի հասցեն է՝ ք.Աբովյան, Բարեկամության հրապ., 1»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 20-րդ հոդվածներին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 20-րդ, 24-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ, 11-րդ հոդվածներին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14, 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(...) Ներկայացված հայցադիմումին կցվել է ՀՀ կոտայքի մարզի Վ. Պտղնի համայնքի ավագանու թիվ 7 հերթական նիստի քաղվածք, որի համաձայն՝ համայնքի ավագանին որոշել է թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող մ/մանկապարտեզի շենքի օտարումը և աճուրդային վաճառքի գին է սահմանվել 1665000 ՀՀ դրամը: Հայցվորը խնդրել է առ ոչինչ ճանաչել հենց այս ակտը: Ընդ որում՝ հարկ եմ համարում նշել, որ*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 105-107:

հայցադիմումի ընդունելության փուլում չափազանց կարևոր է հայցի փաստական հիմքի ուսումնասիրությունը: Մասնավորապես՝ հայցադիմումից բխում է, որ հայցվորի կարծիքով վարչական մարմնին՝ Վերին Պտղնի համայնքի ավագանուն, նախադպրոցական կրթության բնագավառում վերապահված չէ նախադպրոցական հիմնարկի շենքի աճուրդային կարգով օտարելու հարցը կարգավորելու լիազորություն, քանի որ վարչական մարմնի լիազորությունները ապառիչ սահմանված են օրենքով: Հայցադիմումից բխում է, որ Դատարանի կողմից պետք է քննարկվեն ոչ թե աճուրդի անցկացման հետ կապված ընթացակարգային հարցերը, այլ համայնքի ավագանու՝ նման ակտ ընդունելու լիազորություն ունենալու հարցը, ինչը կարող է քննարկվել միայն մասնագիտացված դատարանի կողմից:

Ելնելով Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշմամբ արձանագրված հարցադրումներից՝ Դատարանը գտնում է, որ առերևույթ առկա են բոլոր պայմանները՝ գործը վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու համար:

Դատարանի գնահատմամբ հայցադիմումի ընդունելության փուլում ոչ հայցադիմումից, ոչ կից ներկայացվող փաստաթղթերից չի բխում, որ իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Վերին Պտղնի համայնքի ավագանու՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:

Դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա է Վարչական դատարանի քննությանը, քանի որ հայցվորի հիմնական պահանջը համայնքի ավագանու որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջն է: Իսկ այդ որոշումը վարչական ակտ է, թե ոչ կամ կարող է վիճարկվել, թե ոչ, պետք է որոշվի գործի քննության ընթացքում Վարչական դատարանի կողմից:

Դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով հակակոռուպցիոն դատարանների՝ որպես մասնագիտացված դատարանների ստեղծումից ի վեր բոլոր այն գործերը, որոնք վերաբերում են դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական

դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը քննվում են այդ դատարանների կողմից»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եզրակացությունն այն մասին, որ թիվ ՎԴ/11484/05/24 գործն ըստ հայցի՝ Կոտայքի մարզի դատախազության ընդդեմ Աբովյան համայնքի ավագանու՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, որպես առ ոչինչ ճանաչված վարչական ակտի եզրևանքի ածանցյալ պահանջներ՝ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 92ա որոշումը, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի աճուրդը, Գագիկ Հովսեփյանի և Վերին Պտղնի համայնքի ղեկավարի միջև 2003 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 96 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2004 թվականի հունվարի 13-ին կնքված հողային տարածքի վարձակալության պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 3-ի թիվ 13 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված Համաձայնագիրը, Գագիկ Հովսեփյանի և Հերմինե Նվերի Պողոսյանի միջև 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված մանկապարտեզի շենքի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 9-ի թիվ 3 որոշումը, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 բնակելի տունը 220,9քմ մակերեսով և 0,03882հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ 2011 թվականի փետրվարի 14-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը՝ Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 հասցեի 220,9քմ մակերեսով*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 118-121:

հասարակական մանկապարտեզի և 4,0քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Գագիկ Հովսեփյանի անվամբ 2004 թվականի հունվարի 27-ին և 2010 թվականի մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 220,9քմ մակերեսով մանկապարտեզի շենքի և մանկապարտեզի կառուցապատման 0,03882հա մակերեսով հողամասի նկատմամբ 2010 թվականի ապրիլի 27-ին Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մսանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական*

ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում*

հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»[3]:

9.1 ՀՀ Վճռաբեկ դատարանը, *ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունն ընդդեմ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում անդրադառնալով դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցման բացառիկ դեպքերի առանձնահատկություններին, արձանագրել է հետևյալը. *«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին դեպքում, դատախազը, համարելով, որ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերը, իսկ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, պետք է անմիջապես ձեռնամուխ լինի պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցմանը: Այսինքն՝ այն դեպքերում, երբ պետական (համայնքային) շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի,* ***դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային իրավասություն:***

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս: Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն՝* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին: Այնուհետև դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո համապատասխան մարմնի կողմից ողջամիտ ժամկետում հայց չներկայացնելու, այլ կերպ ասած՝ անգործություն դրսևորելու պարագայում միայն դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն»[4]:

10. Սույն որոշման 8-9.1-ին կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Կոտայքի մարզի դատախազությունը 2024 թվականի սեպտեմբերի 18-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Աբովյան համայնքի ավագանու՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, որպես առ ոչինչ ճանաչված վարչական ակտի հետևանքի ածանցյալ պահանջներ՝ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 92ա որոշումը, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի աճուրդը, Գագիկ Հովսեփյանի և Վերին Պտղնի համայնքի ղեկավարի միջև 2003 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված

---

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունն ընդդեմ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի* ՝վարչական գործով 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշումը:

անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 96 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2004 թվականի հունվարի 13-ին կնքված հողային տարածքի վարձակալության պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 3-ի թիվ 13 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված Համաձայնագիրը, Գագիկ Հովսեփյանի և Հերմինե Նվերի Պողոսյանի միջև 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված մանկապարտեզի շենքի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 9-ի թիվ 3 որոշումը, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 բնակելի տունը 220,9քմ մակերեսով և 0,03882հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ 2011 թվականի փետրվարի 14-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը՝ Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 հասցեի 220,9քմ մակերեսով հասարակական մանկապարտեզի և 4,0քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Գագիկ Հովսեփյանի անվամբ 2004 թվականի հունվարի 27-ին և 2010 թվականի մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 220,9քմ մակերեսով մանկապարտեզի շենքի և մանկապարտեզի կառուցապատման 0,03882հա մակերեսով հողամասի նկատմամբ 2010 թվականի ապրիլի 27-ին Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին[5]:

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ վերահասցեագրվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմերից մեկը՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, Վերին Պտղնի համայնքի ավագանին է, սակայն խնդրո առարկա գույքի աճուրդի իրավահարաբերության

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

բովանդակությունը չի կազմում Վերին Պտղնի համայնքի ավագանու՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը)[6]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ հայցադիմումից բխում է, որ Դատարանի կողմից պետք է քննարկվեն ոչ թե աճուրդի անցկացման հետ կապված ընթացակարգային հարցերը, այլ համայնքի ավագանու՝ նման ակտ ընդունելու լիազորություն ունենալու հարցը, ինչը կարող է քննարկվել միայն մասնագիտացված դատարանի կողմից[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելն է, իսկ հայցի հիմքը՝ Վերին Պտղնի համայնքի ավագանու կողմից մանկապարտեզի՝ որպես նախադպրոցական հիմնարկի աճուրդով օտարման լիազորություն չունենալու փաստը, որպիսի իրավահարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինը հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, այլ ոչ որպես քաղաքացիաիրավական մասնավոր հարաբերությունների սուբյեկտ: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի իրավասությանը, սույն գործով Կոտայքի մարզի դատախազությունն իրացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը՝

---

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մասնավորապես վարչական դատավարության կարգով օրենքով իրեն վերապահված՝ պետության (համայնքի) գույքային շահերի պաշտպանության հայց է ներկայացրել ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ Աբովյան համայնքի ավագանու, քանի որ այդպիսի վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

Հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

13. Վերոգրյալից հետևում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/11484/05/24 գործն ըստ հայցի՝ Կոտայքի մարզի դատախազության ընդդեմ Աբովյան համայնքի ավագանու՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, որպես առ ոչինչ ճանաչված վարչական ակտի հետևանքի ածանցյալ պահանջներ՝ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 92ա որոշումը, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի աճուրդը, Գագիկ Հովսեփյանի և Վերին Պտղնի համայնքի ղեկավարի միջև 2003 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 96 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2004 թվականի հունվարի 13-ին կնքված հողային տարածքի վարձակալության պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 3-ի թիվ 13 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված Համաձայնագիրը, Գագիկ Հովսեփյանի և Հերմինե Նվերի Պողոսյանի միջև 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված մանկապարտեզի շենքի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 9-ի թիվ 3 որոշումը, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 բնակելի տունը 220,9քմ մակերեսով և 0,03882հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ 2011 թվականի փետրվարի 14-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը՝ Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 հասցեի 220,9քմ մակերեսով հասարակական

մանկապարտեզի և 4,0քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Գագիկ Հովսեփյանի անվամբ 2004 թվականի հունվարի 27-ին և 2010 թվականի մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 220,9քմ մակերեսով մանկապարտեզի շենքի և մանկապարտեզի կառուցապատման 0,03882հա մակերեսով հողամասի նկատմամբ 2010 թվականի ապրիլի 27-ին Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Կոտայքի մարզի դատախազության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/11484/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/11484/05/24 գործն ըստ հայցի՝ Կոտայքի մարզի դատախազության ընդդեմ Աբովյան համայնքի ավագանու՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2003 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 7 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, որպես առ ոչինչ ճանաչված վարչական ակտի հետևանքի ածանցյալ պահանջներ՝ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 92ա որոշումը, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի աճուրդը, Գագիկ Հովսեփյանի և Վերին Պտղնի համայնքի ղեկավարի միջև 2003 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2003 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 96 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2004 թվականի հունվարի 13-ին կնքված հողային տարածքի վարձակալության պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2010 թվականի մարտի 3-ի թիվ 13 որոշումը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի և Գագիկ Հովսեփյանի միջև 2010 թվականի մարտի 10-ին կնքված Համաձայնագիրը, Գագիկ Հովսեփյանի և Հերմինե Նվերի Պողոսյանի միջև

2010 թվականի ապրիլի 21-ին կնքված մանկապարտեզի շենքի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 9-ի թիվ 3 որոշումը, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 բնակելի տունը 220,9քմ մակերեսով և 0,03882հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ 2011 թվականի փետրվարի 14-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը՝ Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 հասցեի 220,9քմ մակերեսով հասարակական մանկապարտեզի և 4,0քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Գագիկ Հովսեփյանի անվամբ 2004 թվականի հունվարի 27-ին և 2010 թվականի մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 42 220,9քմ մակերեսով մանկապարտեզի շենքի և մանկապարտեզի կառուցապատման 0,03882հա մակերեսով հողամասի նկատմամբ 2010 թվականի ապրիլի 27-ին Հերմինե Նվերի Պողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ